Միքայել Նալբանդյան

Վեցերորդը— մի՛ շնար

Եվրոպացոց առհասարակ քաղաքական մի ծես էր,
Որ այր մարդը հանդիպելիս՝ կնոջ ձեռը կպաչեր .
Չկար թեև խենեշության մի անպարկեշտ նշանակ,
Բայց վեցերորդ Պիոս պապը դուրս տվեց մի մեծ կոնդակ .

«Որ ոչ մի մարդ այնուհետև կին մարդու կամ աղջկա
«Չըհանդգնի ձեռը պաչել ըստ հասարակ կանոնին,
«Թե լոկ նայելն աղջկերանց և կամ կնիկների վերա
«Սաստիկ մեղք է, արդեն ընդդեմ աստվածային օրենքին»:

Նա պատժում էր, նզովում էր հրապարակավ մարդերը,
Որ յուր խոսքը չէին պաշտում ու յուրյանց հին կանոնով
Վարվում էին միշտ համարձակ, ինչպես յուր քարտուղարը
Բռնըվեցավ այս հանցանքում ու դատվեցավ ժողովով:

Քարտուղարը խելոք մարդ էր, նա գիտեր, որ Պիոսը,
Թե կին գտնե, պիտի անշուշտ պաչե նորա ոտները,
Բարկացել էր նորա վերա, յուր ամոթի փոխանակ
Աշխատում էր ողջ քաղաքին պապը առնել խայտառակ:

Չգիտեմ ինչո՞ւ, բայց գիտեմ որ Գերմանիո թագուհին
Հյուր էր եկել պապի մոտը մի օր, երբ նա տանը չէր .
«Պարտեզումը նա ճեմում է» ծառաները ասացին .

Թագուհին էլ գնաց պարտեզ, որ գտնվում էր տան մոտին:

Իմ պապը երբ տեսավ նորան, տեսավ չքնաղ երեսը,
Եփ էր գալի երակներում . . . արյունը .
Թեպետ նա միշտ անսխալ է ու Քրիստոսի փոխանորդ,
Սակայն բռնեց ձեռքը տիկնոջ, քաշեց նորան իրեն մոտ:

Երբ առանձին ջերմ համբույրներ նորա ձեռին տալիս էր,
Քարտուղարը ծառի հետքից՝ պարզ ամենը տեսնում էր .
Նա յուր մտքում ուրախացավ, ասաց՝ ա՜ ա՜ դու էլ ընկար .
Առավ ածուխ, գրեց պատին . «վեցերորդը՝ մի՛ շնար»:

Պապը տեսավ որ յուր գործը քարտուղարը իմացավ,
Այն կոնդակը որ տվել էր, բոլորովին չքացավ .
Քարտուղարը այն մասին գրեց, որ պապը վեցերորդ էր,
Մանավանդ այս համարները խորհրդական են թիվեր: